



**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇԽԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ**

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ
ՈՒՂԵՐՁԸ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ**

Մայր Աթոռ Սբ Էջմիածնից հայրապետական Մեր օրինությունն ու ջերմ շնորհավորանքներն ենք բերում համայն մեր ժողովրդին՝ Հանրապետության տոնի առիթով:

Այսօր տոնախմբում ենք Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադրումը՝ արդար հպարտությամբ հիշելով մայիսյան հերոսամարտերը Սարգսրապատում, Ղարաքիլիսայում ու Բաշ Ապարանում, երբ միաբանված մեր ժողովուրդը կենաց ու մահու պայքարով դիմակայեց թուրքական բանակին եւ համագլխին հաղթանակով ապահովեց հայրենի հողում ապրելու, իր երկիրը շենացնելու աստվածշնորհ իրավունքը: Տիրոջ առաջնորդությամբ հայրենասիրության նույն ջերմ զգացումով եւ անվեհեր ոգով այսօր մեր զավակները պաշտպանում են Հայաստանի եւ Արցախի սահմանները՝ իրենց սխրանքներով հիշատակի արժանի նոր էջեր հավելելով մեր պատմությանը: Մեր հայրենիքի ազատության ու խաղաղության համար իրենց կյանքը գոհաբերած մեր հերոս զավակների ու սերունդների առջեւ պարտք ունենք, եւ այն մեր երկրի հզորացումն է, մեր ժողովրդի բարօրությունը, մեր պետականության ամրապնդումն ու ապահովությունը:

Հանրապետության տոնի այս նշանակալի օրը առ Աստված աղոթքով Բարձրյալի հանապազ գորակցությունն ենք հայցում հավատավոր մեր ժողովրդին՝ անկտրում ոգով ու պատրաստակամ հանձնառություններով կերտելու մեր հայրենիքի պայծառ, շեն ու բարօր ապագան: Թող Բարձրյալն Աստված անխաթար խաղաղություն պարգևի մեր երկրին եւ առատապես օրհնի բրիտանասներ մեր ժողովրդին ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռս:

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց**

15 մայիսի

**Մոսկվայի Պետական մանկավարժական
համալսարանի ռեկտրին**



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ալեքսեյ Սեմյոնովի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Երեւանի Կ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր պրոֆ. Ռուբեն Միրզախանյանի:

Հանդիպմանը տիար Ռուբեն Միրզախանյանը, հայցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը, Նորին Սրբությանը ներկայացրեց երկու կրթական հաստատությունների միջեւ ձեռագրվող համագործակցությունը եւ կրթական գործընթացներին ի նպաստ՝ իրականացվելիք համատեղ ծրագրերն ու միջոցառումները:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական գնահատանքը փոխանցեց հյուրերին եւ մեծապես կարեւորեց կրթական հաստատությունների միջեւ հարաբերությունների սերտացումն ու առավել արդյունավորումը՝ ընդգծելով, որ դրանք պետք է համահունչ լինեն երկու ժողովուրդների դարավոր բարեկամության ոգուն:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց միջպետական մակարդակի վրա կրթական ոլորտում ձեւավորվող գործակցության համար, ապա անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու պատմական դերակատարությանը՝ կրթության կազմակերպման գործում, եւ կրթադաստիարակչական ոլոր-

տում ծավալվող ներկայիս գործունեությանը: Վեհափառ Հայրապետը գնահատանքով նշեց, որ այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը սերտորեն համագործակցում է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ, իրականացվում են համատեղ ձեռնարկներ: Նորին Սրբությունը տեղեկություններ փոխանցեց Մայր Աթոռի հովանու ներքո գործող երկու հանրակրթական դպրոցների ու հայորդյաց տների գործունեության, ինչպես նաեւ տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ առկա գործակցության մասին, որոնց թվում է նաեւ Երեւանի պետական մանկավարժական համալսարանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջեւ առկա ջերմ հարաբերություններին եւ համագործակցությանը, որի շրջանակներում հոգեւոր կրթական հաստատությունների միջեւ կատարվում է ուսանողների փոխանակում:

Իր հերթին Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ռեկտորը կարեւորեց իր այցը բարեկամ Հայաստանի Հանրապետություն եւ խոսեց ուսանողների հետ տարվող համակողմանի կրթադաստիարակչական աշխատանքի՝ մասնավորապես սոցիալական ծառայության ոլորտում ուսանողների ակտիվ ներգրավման մասին, ապա ներկայացրեց իրենց համալսարանի եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու միջեւ ձեւավորված ամուր կապերը՝ ընդգծելով կրթության ոլորտում գիտելիքների զուգահեռ հոգեւոր արժեքների փոխանցման առաջնահերթության մասին: Ռեկտորը նաեւ իր ցավն արտահայտեց այս օրերին Լեռնային Ղարաբաղի սահմանագծին տիրող իրավիճակի առիթով:

16 մայիսի

**«Քրիստոսի խաղաղություն»
կազմակերպության ներկայացուցիչներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Քրիստոսի խաղաղություն» (Pax Christi) միջազգային կաթոլիկ կազմակերպության Ավստրիայի մասնաճյուղի գլխավոր քարտուղարության ներկայացուցիչներին եւ անդամներին:

Կազմակերպության քաղաքական ռեֆերենտ դոկտոր Ռիխարդ Հուսալը, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը, հակիրճ ներկայացրեց «Քրիստոսի խաղաղություն» կազմակերպության առաքելությունը եւ ներկայիս խաղաղարար գործունեությունը: Անդրադառնալով անցյալի խնդիրների հաղթահարմանն ու հաշտեցման ուղիների որոնմանն ուղղված ծրագրերին՝ դոկտոր Ռիխարդ Հուսալը տեղեկացրեց նաեւ կազմակերպության ջանքերով, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով, Ինսսբրուք քաղաքում կազմակերպված հիշատակի արարողությունների մասին, որոնց մասնակցություն բերեցին բազմաթիվ ավստրիացիներ:

Այնուհետեւ Վեհափառ Հայրապետն իր պատգամն ու օրհնությունը բերեց կաթոլիկ ուխտավորներին՝ մարդեղով, որ Հայաստան իրենց ուխտագնացության ընթացքում ներշնչվեն հայոց հոգեւոր սրբություններով:

Նորին Սրբությունը ողջունեց աշխարհում խաղաղության եւ արդարության հաստատմանն ուղղված «Քրիստոսի խաղաղություն» կազմակերպության գործունեությունը՝ մասնավոր երախտագիտություն հայտնելով Ավստրիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործում կաթոլիկ կազմակերպության ունեցած կարեւոր ներդրումի, ինչպես նաեւ հիշատակի արարողությունների կազմակերպման համար:

Ամենայն Հայոց Հայրապետն անդրադարձավ նաեւ Հայաստանյայց Առաքելական եւ Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ ձեւավորված ջերմ հարաբերություններին եւ գործակցությանը՝ դրա արտահայտություններից մեկը նկատելով նաեւ առաջիկա հունիս ամսին Հռոմի Սրբազան Զահնայապետ Ֆրանցիսկոս Պապի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածին:

Նորին Սրբությունը պատասխանեց ներկայների հարցերին, որոնք առնչվում էին Եկեղեցու կրթադաստիարակչական գործունեությանը, Եկեղեցի-պետություն հարաբերություններին, ընտանիքին վերաբերող եկեղեցական հայեցակար-

գային ընկալումներին:

Մասնավոր անդրադարձ կատարվեց Եկեղեցիների խաղաղարար գործունեությանը: Այս կապակցությամբ խոսվեց դարաբաղյան հակամարտության, սույն թվականի ապրիլին Լեռնային Ղարաբաղի սահմանի ողջ երկայնքով Ադրբեյջանի սանձազերծած ռազմական գործողությունների, ինչպես նաեւ հոգեւոր առաջնորդների կողմից խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերի մասին:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը «Քրիստոսի խաղաղություն» կազմակերպության անդամներին մաղթեց արգասաբեր գործունեություն, որպեսզի նաեւ նրանց ջանքերի շնորհիվ աշխարհում վերջ գտնեն անարդարությունը, բռնությունը եւ պատերազմի չարիքը:

Շարունակությունը՝ էջ 4



Տեղեկություններ Նորին Սրբություն Տոմի Պապ Ֆրանցիսկոսի Վճարի Ծրագրի վերաբերյալ



Տոմի Սրբազան Բախանայապետ Ֆրանցիսկոս Պապի Հայաստանի Հանրապետություն այցելությանը կմեկնարկի ս. թ. հունիսի 24-ին: Այցի շրջանակներում Երեւանի «Չվարթինգ» միջազգային օդանավակայանում տեղի կունենա պաշտոնական դիմավորման արարողություն, որից հետո Սրբազան Բախանայապետը կմեկնի Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Մայր տաճարում տեղի կունենա բարիգալստյան՝ «Հրաշափառի» արարողությունը:

Նույն օրը՝ երեկոյան, Սրբազան Բախանայապետը ՀՀ Նախագահի նստավայրում հանդիպում կունենա Նախագահ Սերժ Սարգսյանի, ապա՝ ՀՀ իշխանությունների, հասարակության եւ դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների հետ: Այցի առաջին օրը կամփոփվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կայանալիք՝ Ֆրանցիսկոս Պապի եւ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիպմամբ:

Հունիսի 25-ի առավոտյան Սրբազան Բախանայապետը կայցելի Ծիծեռնակաբերդ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր եւ թանգարան: Տոմի Պապ Ֆրանցիսկոսն այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ կմեկնի Գյումրի, քաղաքի Վարդանանց հրապարակում կմատուցվի Պատարագ: Գյումրիում Տոմի Պապը նաեւ կայցելի Անարատ Հոգւթյան Հայ քույրերի միաբանության՝ «Տիրամայր Հայաստանի» կուսաստան, Հայաստանայայց Առաքելական Ս. Եկեղեցու Ծիրակի թեմի առաջնորդական Ցոթ Վերջ Ս. Աստվածածին եկեղեցի եւ Սրբոց Նահատակաց հայ կաթողիկե Մայր տաճար: Նույն օրը՝ երեկոյան, Երեւանի Հանրապետության հրապարակում տեղի կունենա Էկումենիկ արարողություն եւ Խաղաղության աղոթք:

Հունիսի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Տոմի Սրբազան Բախանայապետը հանդիպում կունենա Հայ Կաթողիկե եպիսկոպոսների հետ, կմասնակցի Պատարագի արարողությանը եւ Էկումենիկ ճաշկերույթի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Հայաստանայայց Առաքելական եւ Հայ Կաթողիկե Եկեղեցիների արքեպիսկոպոսների եւ եպիսկոպոսների ու պապական պատվիրականության հետ: Ապա Ֆրանցիսկոս Պապը հանդիպում կունենա Հայ Եկեղեցու պատվիրակների եւ բարերարների հետ:

Տոմի Սրբազան Բախանայապետ Ֆրանցիսկոս Պապը եւ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կստորագրեն համատեղ հայտարարություն: Հովվապետները նաեւ աղոթք կմատուցեն Խոր վիրապի վանքում:

Նույն օրը Տոմի Սրբազան Բախանայապետ Ֆրանցիսկոս Պապը Երեւանից կմեկնի Տոմ:

Հաստատվել են Տոմի Սրբազան Բախանայապետ Ֆրանցիսկոս Պապի Հայաստան այցի կարգախոսը եւ տարբերանշանը

Հաստատվել են ս. թ. հունիսի 24-ին Տոմի Սրբազան Բախանայապետ Ֆրանցիսկոս Պապի Հայաստանի Հանրապետություն այցի կարգախոսը եւ տարբերանշանը՝ համապատասխան նկարագրությամբ: Կարգախոսն է՝ «Այց առաջին քրիստոնյա երկիր»:

Տարբերանշանը շրջանաձեւ է, հիմքում Խոր վիրապի վանքի եւ բիբլիական Արարատ լեռան պատկերն է: Տարբերանշանի գույներն են մանուշակագույնը եւ դեղինը, որոնք արտահայտում են Հայաստանայայց Առաքելական Սբ Եկեղեցու եւ Տոմի Կաթողիկե Եկեղեցու պաշտոնական գույները: Տարբերանշանում նաեւ ներառված են երկու Եկեղեցիների գիւնանշանները:

Շրջանակի երկայնքով գրությունն արտահայտում է բուն այցը՝ «Ֆրանցիսկոս Պապ. Հայաստան. 24-26 հունիս, 2016»:

Հիշատակվեցին Ս. Հռիփսիմյանց կույսերի,



Սբ Հռիփսիմյանց կույսերի հիշատակի օրը

Մայիսի 23-ին Հայաստանայայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնեց **Ս. Հռիփսիմյանց կույսերի հիշատակը**: Տոնական այս օրը նաեւ Ս. Հռիփսիմե վանքի ուխտի օրն էր: Այս օրը Մայր Աթոռից Ս. Հռիփսիմե վանք է տարվում սրբուհու մասունքն ամփոփող Աջը:

Առավոտյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնից եկեղեցականների թափորը, բազմաթիվ ուխտավորների ուղեկցությամբ, Էջմիածնի հայրոցայաց տան սաների թմբուկների զարկերի ներքո, շարժվեց Ս. Հռիփսիմե վանք: Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սուրբ Հռիփսիմեի մասունքն ամփոփող Աջով օրհնում էր բարեպաշտ ժողովրդին: Ս. Գրիգոր Լուսավորչի կամարի առջեւ Նորին Սրբությունը սրբազան Աջը փոխանցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանին:

Ս. Հռիփսիմե վանքի առջեւ թափորը դիմավորեցին վանքի հոգեւոր սպասավորները եւ բազում հավատացյալներ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանորդից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանի գլխավորությամբ:

Տոնի առիթով վանքում մատուցվեց Պատարագ: Պատարագից էր Ս. Հռիփսիմե վանքի վանահայր Մատթեոս վրդ. Պողոսյանը:

Պատարագի ընթացքում հայր սուրբն անդրադարձավ ս. Հռիփսիմյանց Նահատակության պատմությանը եւ նշանակությանը Հայաստանում քրիստոնեության տարածման գործում:

«Հռիփսիմյանց կույսերի անկոտրում կամքը Նրանց առաջնորդեց դեպի երկնքի արքայության լուսավոր թագն ու պսակը, որի վկայությունն այսօր Տիրոջ այս գորավոր տաճարն է՝ մեկ ու կես հազարամյակից ավելի նվիրական ուխտատեղին մի ժողովրդի, որը Նույնպես մեծ դժվարությունների ու փորձությունների գնով իր սրտում պահում է ճշմարիտ ու լուսավոր հավատքը մեր Տեր Հիսուս Քրիստոսի, մեր արարիչ Աստծու...», - նշեց հայր Մատթեոսն իր խոսքում:

Նա ընդգծեց, որ ս. Հռիփսիմյանց Նահատակության խորհուրդն ու օրհնակն այժմեական են, քանզի միշտ էլ քրիստոնեություն պարգեւի, ինչպես դարերի ընթացքում:

Նյաներն իրենց հավատքի համար հալածվել են, չարհարանքների ենթարկվել եւ Նահատակվել: Նա հաստատեց, որ այսօրվա աշխարհը նույնպես բազում մարտահրավերներ, դժվարություններ ու փորձություններ է հարուցում քրիստոնյաների համար:

Հայր սուրբը հրավիրեց ուխտավորներին՝ աղոթքով հայցելու ս. Հռիփսիմյանց բարեխոսությունը, որ Տերն այս դժվարին օրերին մեր ժողովրդին ուժ է կարողունալ:



Սբ Հռիփսիմյանց կույսերի հիշատակի օրը

Ս. Պատարագի ավարտին սրբուհու մասունքակիր Աջով կատարվեցին հավատացյալների օրհնություն եւ Անդաստանի կարգ: Արարողությունը հանդիսապետեց Մայր Աթոռի վանորդից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանը:

Տոնական արարողություններին մասնակցում էին Մայր Աթոռի միաբաններ, հոգեւոր հովիվների գլխավորությամբ տարբեր թեմերից ժամանած ուխտավորներ:

♦♦♦

Մայիսի 24-ին տոնվեց **Ս. Գայանյանց կույսերի հիշատակը**:

Առավոտյան Մայր տաճարից եկեղեցա-

ներին դիմագրավելով՝ անթառամ պսակին արժանացան: ... Սրբուհի Գայանեն մեզ հորդորում է չկորցնել սուրբ զգաստությունը, ինչը հույժ կարեւոր է հատկապես այս դարաշրջանում»:

Հայր Անանիան նաեւ նշեց, որ Աստծո, իր ընտանիքի, հայրենիքի հանդեպ հավատարիմ մարդը քայլում է կատարելության ճանապարհով՝ պատրաստ կարոտյալ քրիստոնյային օգնության ձեռք մեկնելու եւ նրան գորակցելու:

Պատարագի ավարտից հետո Ս. Գայանե վանքի բակում սրբուհու մասունքակիր Աջով կատարվեցին հավատացյալների օրհնություն եւ Անդաստանի կարգ:

♦♦♦

Մայիսի 26-ին նշվեց **Ս. Հովհաննես Կարապետի եւ Ս. Աթանազիոս Եպիսկոպոսի տոնը**, որը նաեւ Էջմիածնի **Ս. Շողակաթ վանքի ուխտի օրն է**:

Առավոտյան Մայր Աթոռ Սբ Էջմիածնից եկեղեցականների դասը հանդիսավոր թափորով եւ ուխտավորների ուղեկցությամբ Ս. Շողակաթ վանք բերեց ս. Հովհաննես Մկրտչի մասունքն ամփոփող խաչ-մասունքարանը: Սրբազան մասունքը կրում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Գեորգ եպս Սարգսյանը:

Ս. Շողակաթ վանքի առջեւ թափորը դիմավորեցին բազմաթիվ ուխտավորներ՝ Մայր Աթոռի վանորդից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանի գլխավորությամբ:

Տոնի կապակցությամբ վանքում մատուցվեց Պատարագ: Պատարագից էր Ս. Շողակաթի վանահայր Խաչատուր աբեղա Կնյազյանը:

Ս. Գայանյանց կույսերի, Ս. Շողակաթի վանքի եւ Ս. Էջմիածնի Կաթողիկէի տոները



Սր Գայանյանց կույսերի հիւսանակի օրը

Հայր Խաչատուրը, իր քարոզում անդրադառնալով տոնի խորհրդին, հատկապէս կարեւորեց ողորմության դրսերում անհրաժեշտությունն այսօրվա կյանքում: «Աստված՝ որպէս ողորմության եւ անմագորդ սիրո աղբյուր, ուղարկեց Իր միածին Որդուն, Ով Իր կյանքի ողջ ընթացքում, Իր փրկագործության առաքելության մէջ ցույց տվեց մարդուն, թե ինչպէ՛ս կարելի է ողորմած լինել: Ողորմած լինել նշանակում է մարդու մէջ տեսնել Աստծուն, ողորմած լինել նշանակում է հարգանք, գութ, կարեկցանք ունենալ մարդու հանդէպ», - պատգամեց պատարագիչ հայր սուրբը:

Եկեղեցու տարբեր կառույցներում պաշտօնավարող եպիսկոպոսներ, Մայր Աթոռի միաբաններ, Տավուշի թեմի հոգեւոր դասը եւ մարզի ուխտավորները՝ գլխավորությամբ Տավուշի մարզպետ Հովհիկ Աբովյանի եւ համայնքապետերի, ինչպէս նաեւ՝ զինվորականներ ու բազում հավատավոր հայրերը: Պատարագի արարողությանը ներկա էին Մայր Աթոռի բարերարներ ՀԲԸՄ Նախագահ Պերճ Սեդրակյանը, «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հիմնադիր Նախագահ Գաբրիել Զեմբերճյանը եւ ՀԲԸՄ կենտրոնական վարչական ժողովի անդամ, Միջին Արեւելքի եւ Հայաստանի ծրագրերի

տատումը՝ որպէս Մայր Եկեղեցու բարախող սիրտ, ճառագող արեւ, որը լցնում է հայոց հոգեւոր կյանքի անդաստանները, զարգացնում մեր հոգեւոր մշակույթը, ոռոգում եւ լցնում մեր հայրենիքի սահմանների դաշտերն ու անդաստանները՝ խաղաղության հաստատման համար:

Կարծես Նախախնամական լինի, որ այս օրերին շարունակաբար ազգովի տոնախմբում էինք մայիսյան հերոսական տոների փառապանծ էջերը: Եվ հետ դառնալով դեպի չորրորդ դարը՝ մեր Ս. Եկեղեցու հիմնադրման օրերը, հասկանում ենք, որ այսօրվա գաղափարն ամփոփում եւ դառնում է եզրակետն այդ բոլոր հաղթանակների:

Ներքո ողջ ժողովրդի պատիվն ու արժանապատվությունն են պահում:

«Հաղթանակի հարության հույսով մեր ժողովրդի համար մահ չկա, քանի դեռ գոյություն ունի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, քանի դեռ մեզ ուղեկցում են ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը եւ ս. Տրդատ արքայի հուժկու բազուկը: Կաթողիկէ տաճարը սոսկ պատմական հուշակոթող չէ, այլ՝ այսօր ապրող քրիստոնյաներս ենք», - եզրափակեց իր խոսքը սրբազան հայրը՝ մաղթելով, որ Աստված Իր ներկայությամբ լցնի հայոց կյանքը:

Հավարտ Պատարագի սրբազան արարողության՝ կատարվեց Ս. Էջմիածնի մաղթանք: Ներկաներն աղոթեցին Մայր Աթոռ Ս.



Կաթողիկէ Սր Էջմիածնի տոնի օրը

Սրբազանն իր քարոզում անդրադարձավ հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռի ստանձնած փրկչական դերակատարությանը, ինչպէս նաեւ՝ Հայոց ցեղասպանության տարիներին եղեռնից մազապուրծ եղած գաղթականների, որբերի նկատմամբ ինսամատարությանը՝ մեծ ակնածանքով վերի-

Էջմիածնի անսասանության եւ հավիտենական առաքելության անխափան արդյունավորման համար:

Մայր տաճարի շրջափակում՝ Ս. Տրդատի կամարի առջեւ, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր մասնավոր գնահատանքն ու օրհնությունը բերեց Տավուշի թեմի ուխ-



Սր Շողակաթի վանքի ուխտի օրը

Պատարագի ավարտին ս. Հովհաննէս Մկրտչի մատուցակիր խաչով կատարվեցին նաեւ հավատացյալների օրհնություն եւ Անդաստանի կարգ: Այնուհետեւ տարբեր վայրերից ժամանած ուխտավորներին օրվա խորհրդի առիթով մատաղ բաժանվեց:

◆◆◆

Մայիսի 29-ին նշվեց **Կաթողիկէ Ս. Էջմիածնի տոնը:**

Հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Միածնաէջ Մայր տաճարում մատուցվեց Պատարագ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էին հավաքվել հայաստանյան թեմերի առաջնորդներ, Հայ

պատասխանատու Վազգեն Յակոբյանը:

Պատարագիչն Էր Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Եպս Գալստանյանը:

Օրվա խորհրդի շուրջ քարոզելով՝ Բագրատ սրբազանը մասնավորաբար ասաց. «Այսօր Կաթողիկէ Ս. Էջմիածնի տոնն է, եւ մենք աշխարհի տարբեր ծայրերից, Հայոց աշխարհի գանազան բնակավայրերից, սահմաններից, հոգեւոր եւ աշխարհիկ ներկայացուցիչներով համախումբ, փառաբանում ենք եւ շնորհակալություն հայտնում մեր Տիրոջը՝ մեզ ընծայված այս մեծ շնորհի համար:

...Մեծ խորհուրդ ունի Ս. Էջմիածնի հաս-



Կաթողիկէ Սր Էջմիածնի տոնի օրը

շելով այն կարեւոր որբահավաք եւ որբախնամ առաքելությունը, որ այդ տարիներին իրականացվել է ՀԲԸՄ-ի կողմից: Տավուշի թեմի առաջնորդը նաեւ տեղեկացրեց, որ Տավուշի ուխտավորները եկել են ստանալու Հայոց Հոր օրհնությունը եւ վկայելու, որ կյանքի ու մահվան սահմանագծում ապրող-

տավորներին՝ պատգամելով համախումբ մալ իրենց հոգեւոր առաջնորդի ու մարգպետի շուրջ՝ զորակցելով նրանց հայրենաշեն բոլոր ծրագրերի իրագործմանը, եւ պատգամեց իրենց քաղցրահունչ աղոթքներում մշտապէս հիշել հայրենիքն ու Հայոց Եկեղեցին:



Սր Շողակաթի վանքի ուխտի օրը



Կաթողիկէ Սր Էջմիածնի տոնի օրը

19 մայիսի

Կաթոլիկ ուխտավորներին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայր Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Գերմանիայից Հայաստան ժամանած Տրիերի կաթոլիկ թեմի ուխտավորներին:

Հանդիպման սկզբում ուխտավորների անուկից Ամենայն Յայր Կաթողիկոսը շնորհակալական խոսքով դիմեց Տրիերի թեմի առաջնորդի օգնական աստվածաբան Կատարինա Չեյ-Վորթմանը՝ անդրադառնալով Հայաստանի սրբավայրերից եւ պատմամշակութային հուշարձաններից ստացած խմբի տպավորություններին: Վերջինս ընթերցեց Նաեւ Տրիերի եպիսկոպոս Քրիշտոֆ Շտեֆան Ակկերմանի՝ Գարեգին Բ Վեհափառին ուղղված ողջույնի խոսքը:

Այնուհետեւ կաթոլիկ ուխտավորներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Ամենայն Յայր Կաթողիկոսը: Նորին Սրբությունը ողջունեց ընդ ընդունեց ուխտավորներին այցելող Յայրաստան եւ մեծապես կարեւորեց նման ուխտագնացությունների կազմակերպումը դեպի քրիստոնեական հարուստ ժառանգություն ունեցող երկրներ:

Վեհափառ Յայրապետը այս այցը հատկանշական նկատեց հունիս ամսին Հռոմի Սրբազան Զահարիայապետ Ֆրանցիսկոս Պապի Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանման նախօրեին: Նորին Սրբությունը նշեց, որ հայ ժողովուրդը երախտագետ զգացումներով

րով է սպասում Ֆրանցիսկոս Պապի այցին, որը Նաեւ պիտի նպաստի երկու Եկեղեցիների բարեկամական հարաբերությունների եւ համագործակցության առավել զորացմանն ու ամրապնդմանը: Այս առիթով Ամենայն Յայր Կաթողիկոսը տեղեկացրեց, որ այցի ընթացքում ընդ ընդունեց Յայրապետի հետ համատեղ աղոթք պետք է բարձրացվի՝ հանուն աշխարհի խաղաղության:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին Եկեղեցու քարոզչական գործունեությանը, Եկեղեցի-պետություն հարաբերություններին, ինչպես նաեւ տարբեր կրոնների հետեւորդների խաղաղ համակցության խնդրին: Մասնավոր անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սրբավայրերի պահպանության եւ վերականգնման ուղղությամբ ձեռնարկվող քայլերին: Այս կապակցությամբ Վեհափառ Յայրապետն իր մասնավոր գնահատանքը հայտնեց ուխտավորների շարքերում ներկա գտնվող «Եվրոպա Նոստրա» միջազգային կազմակերպության անդամներին՝ հայոց սրբավայրերի վերականգնման գործում կազմակերպության կողմից ցուցաբերված աջակցության համար:

Վերջում Նորին Սրբությունն իր ողջույները փոխանցեց եպիսկոպոս Քրիշտոֆ Շտեֆան Ակկերմանին:

20 մայիսի

Բեյլոցերկովի եւ Բոգուսլավի միսրոպոլիսին



Ամենայն Յայր Կաթողիկոսն ընդունեց Մոսկվայի Պատրիարքության Ուկրաինայի Ուղղափառ Եկեղեցու՝ Ուկրաինայի Չիկված ուժերի եւ գործադիրությունների հետ համագործակցության Միևուրալ բաժնի նախագահ, Աստվածաբանական կանոնական հանձնախմբի նախագահ Բեյլոցերկովի եւ Բոգուսլավի միսրոպոլիտ Ավգուստինի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի:

Վրթանես սրբազանը Նորին Սրբությանը տեղեկացրեց ընդ ընդունեց պատվիրակության՝ Հայաստան այցի նպատակի, համատեղ կազմակերպվող միջոցառումների, ինչպես նաեւ բանակում հոգեւորականների ծառայության շուրջ ունեցած քննարկումների մասին:

Այնուհետեւ Ավգուստինի միտրոպոլիտին ու նրա պատվիրակությանը ողջունեց Ամենայն Յայր Կաթողիկոսը՝ ընդգծելով, որ այս համագործակցությունը վառ վկայությունն է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Մոսկվայի Պատրիարքության միջեւ առկա սերտ ու գործակցային հարաբերությունների: Վեհափառ Յայրապետը գոհունակություն հայտնեց, որ երկու Եկեղեցիների գնահատական կառույցների արգասավոր համագործակցության արդյունքում տեղի է ունենում գործունեության տարբեր ոլորտներում կուտակված հարուստ փորձառության փոխանակում, ինչը նպաստում է քրիստոնեական հո-

գեխնամ առաքելության առավել արդյունավոր իրականացմանը:

Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդության կառույցի ձեւավորմանը եւ գործունեությանը՝ ընդգծելով, որ վերջինս՝ ապրիլյան իրադարձությունները եւս փաստեցին, թե որքան կարեւոր է հոգեւորականների հովվական ծառայությունը բանակում: Նորին Սրբությունը գնահատանքով նշեց, որ այդ ծանր օրերին նրանք ոչ միայն զորակցում ու քաջալերում էին զինվորներին, այլեւ այցելում ու մխիթարում էին մարտական գործողություններում հայրենյաց պաշտպանության համար գոհվածների սգակիր ընտանիքներին:

Ջերմ ընդունելության համար շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը՝ Նորին Սրբազնությունն Ավգուստինի միտրոպոլիտը ներկայացրեց այն գործակցությունը, որ առկա է Մոսկվայի Պատրիարքության՝ Ուկրաինայի Ուղղափառ Եկեղեցու եւ Ուկրաինայի հայոց թեմի միջեւ, ինչպես նաեւ Ուկրաինայում բանակի եւ Եկեղեցու հարաբերությունները: Նա իր հերթին կարեւորեց ճանաչողական փոխայցելությունների կազմակերպումը՝ վստահություն հայտնելով, որ այցն արդյունավետ կլինի նաեւ փորձառության փոխանակման տեսանկյունից:

Վերջում Նորին Սրբությունն իր օրհնությունը փոխանցեց նրանց՝ իրենց առաքելության արդյունավորման մարթալերով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

22 մայիսի

Ասորի Ուղղափառ Եկեղեցու ուխտավորներին

Ամենայն Յայր Կաթողիկոսն ընդունեց Սիրիայից եւ Իրաքից Հայաստան ժամանած Ասորի Ուղղափառ Եկեղեցու շուրջ 50 ուխտավորների՝ ուղեկցությամբ Մեծ Բրիտանիայի Ասորի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Մար Աթանաս եպիսկոպոսի:

Ամենայն Յայր Կաթողիկոսին ներկայացնելով ուխտավորներին՝ Մար Աթանաս եպիսկոպոսը նշեց, որ Հայաստան եւ ժամանել՝ ծանոթանալու առաջին քրիստոնյա ժողովուրդի հարուստ մշակույթին ու հոգեւոր արժեքներին:

Վեհափառ Յայրապետը, իր հայրապետական պատգամը փոխանցելով ընդ ընդունեց ուխտավորներին, մասնավորապես նշեց, որ երկու դավանակից Եկեղեցիների պատմական առնչությունները հասնում են մինչեւ հեռավոր դարերի խորքեր: Երկու քրիստոնյա ժողովուրդները պատմության ընթացքում հաճախ ստիպված են եղել սեփական կյանքով հատուցել քրիստոնեական հավատքի ու արժեքների համար, ինչի վկայությունն են նաեւ օսմանյան Թուրքիայում իրականացված զանգվածային կոտորածները, որոնց զոհ գնացին միլիոնից ավելի հայեր եւ հայրուր հազարավոր ասորիներ: Նորին Սրբությունը փաստեց, որ զորեղ հավատքի ու Տիրոջ Ս. Հարության նկատմամբ հա-

վատքի շնորհիվ է, որ երկու ժողովուրդները կարողացել են դիմագրավել այդ բոլոր արհավիրքներին ու փորձություններին:

Նորին Սրբությունը, վերստին իր գնահատանքը փոխանցելով ուխտավորներին, հորդորեց, որ իրենց ամուր, աննկուն ու հաստատուն հավատքով մշտապես շարունակեն նեցուկ լինել Սիրիայի եւ Իրաքի քրիստոնյաներին: Վեհափառ Յայրապետը նաեւ իր եղբայրական սիրո ջերմ բարեմաղթանքները փոխանցեց Աստիոքի եւ Համայն Արեւելքի Պատրիարք Նորին Սրբություն Մորան Մոր Եփրեմ Բ-ին՝ աղոթելով Ասորի Եկեղեցու ողջ հոգեւորականաց դասի համար:

Անդրադարձ եղավ նաեւ տարածաշրջանում խաղաղության հաստատմանը եւ փախստականների վերաբերող խնդիրներին: Այս առնչությամբ Աթանաս եպիսկոպոսն անդրադարձավ Մերձավոր Արեւելքում տիրող ճգնաժամային իրավիճակին, որի հետեւանքով տարածաշրջանի խաղաղ բնակչությունը կանգնած է ոչնչացման լուրջ սպառնալիքի առջեւ:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե ծ. վրդ. Անանյանը:

Ասորի Ուղղափառ Եկեղեցու ուխտավորները Մայր տաճարում մասնակցեցին Պատարագին:



23 մայիսի

ՀՀ տեսական կառավարման ակադեմիայի դասախոսներին եւ ուսանողներին

Ամենայն Յայր Կաթողիկոսն ընդունեց ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ղեկավարի, պրոֆեսորադասախոսական անձնակազմի եւ ուսանողներին՝ ղեկավար Արսեն Լոբյանի գլխավորությամբ:

Ա. Լոբյանն Ամենայն Յայր Կաթողիկոսին ներկայացրեց կրթական հաստատության առաքելությունը եւ կրթական ծրագրերը: Նա շնորհակալություն հայտնեց Վեհափառ Յայրապետին՝ Հայ Եկեղեցու կառույցների եւ ակադեմիայի միջեւ ձեւավորված գործակցության եւ Մայր Աթոռի՝ տարբեր միջոցառումների առիթներով ցուցաբերած մշտական աջակցության համար: Ռեկտորը շեշտեց Եկեղեցի-քուհեր հարաբերությունների առավել սերտացման եւ զարգացման անհրաժեշտությունը:

Այս ներկաներին իր օրհնությունը բերեց Ամենայն Յայր Կաթողիկոսը՝ կարեւորելով ակադեմիայի առաքելությունը: Վեհափառ Յայրապետը գոհունակություն հայտնեց Մայր Աթոռի կառույցների եւ ակադեմիայի միջեւ ձեւավորված կապերի եւ գործակցության առիթով, ինչը

հնարավորություն է ընձեռում երիտասարդներին հաղորդ դառնալու հոգեւոր արժեքներին եւ Հայ Եկեղեցու պատմությանը: Նորին Սրբությունն ընդգծեց, որ երկրի ապագա ղեկավարները հոգեւոր եւ ազգային արժեքների հիման վրա պետք է կարողանան ամրորեն հաստատել պետության կառույցի հիմքերը:

Չրույցի ընթացքում Ամենայն Յայր Կաթողիկոսը պատասխանեց երիտասարդների հարցերին, որոնք վերաբերում էին Եկեղեցու քարոզչական գործունեությանը, կրթական եւ սոցիալական ոլորտներում Մայր Աթոռի կողմից իրականացվող ծրագրերին, ինչպես նաեւ՝ Եկեղեցականների պատրաստությանն ու Եկեղեցաշինությանը:

Իր հերթին Գարեգին Բ Վեհափառը հետաքրքրվեց ակադեմիայի ուսումնական ծրագրերով եւ շրջակա կարողությունների ընձեռվող հետագա աշխատանքային հնարավորություններով:

Հանդիպմանը ներկա էր նաեւ բուհերի հոգեւոր պատասխանատու Գեղամ սրկ. Ավետիսյանը:



ՎԵՇԱՐԱՆՈՒՄ

24 մայիսի

ԴՆ-ում Ավստրալիայի դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Ավստրալիայի նորանշանակ դեսպան Պիտեր Մարտին Թեշին (ստավայրը՝ Մոսկվա)։

Ողջունելով դեսպանին եւ բարի առաքելություն մաղթելով նրան՝ Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ դեսպանի ջանքերով ավելի կգորանան երկու ժողովուրդների կապերը, եւ կընդլայնվի երկրների միջեւ համագործակցությունը։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ հաստատեց, որ երկկողմ հարաբերությունների սերտացման համար կարելի է կամուրջ է Ավստրալիայի հյուրընկալ հողում հաստատված հայ համայնքը։ Նորին Սրբությունը բարձր գնահատեց հայ համայնքի հանդեպ Ավստրալիայի իշխանությունների դրսևորած հոգատար վերաբերմունքը։

Հայոց Հայրապետը, ի դեմս դեսպան Թեշի, իր երախտագիտությունը հայտնեց Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի օրենսդիր եւ գործադիր մարմիններին՝ ԼՂՀ անկախության, ինչպես նաեւ Հայոց ցեղաս-

պանության ճանաչման գործընթացին բերած աջակցության համար։

Ավստրալիայի դեսպանը եւս իր խորին շնորհակալությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության համար՝ հավաստիացնելով, որ, հակառակ աշխարհագրական հեռավորության, իր ջանքերն ուղղված են լինելու երկու պետությունների միջեւ առկա կապերի առավել խորացման ու ամրապնդմանը։ Նա անդրադարձավ նաեւ Ավստրալիայի հայ համայնքի կարելի Ներգրավվածությանը երկրի կյանքի տարբեր ոլորտներում։

Խոսվեց նաեւ տարածաշրջանում խաղաղության հաստատման համար հոգեւոր առաջնորդների գործադրած ջանքերի, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերությունների, ինչպես նաեւ հասարակության կյանքում Հայոց Եկեղեցու դերակատարության եւ ժամանակակից մարտահրավերների մասին։



29 մայիսի

Օրլովի նահանգապետին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Օրլովի նահանգապետ տիար Վադիմ Պոտոմսկուն եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու վանական վարդապետ Իլիյ Նոգոդինին՝ ուղեկցությամբ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի բարերար Սամվել Մովսիսյանի։

Ամենայն Հայոց Հայրապետն ուրախություն հայտնեց Հայ Եկեղեցու համար նվիրական տոնին՝ Ս. Էջմիածնի Կաթողիկեի ուխտի օրը, հյուրընկալելու Ռուսաստանից ժամանած պատվիրակությանը։

ցաբերվող հոգածու վերաբերմունքի շնորհիվ հայորդիները կարողանում են ազատորեն ապրել իրենց ազգային-հոգեւոր կյանքով։

Չրույցի ընթացքում Հայոց Հովվապետն անդրադարձ կատարեց երկու Եկեղեցիների միջեւ առկա եղբայրական կապերին, ինչպես նաեւ՝ կրթական ոլորտում իրականացվող գործակցությանը։

Վանական վարդապետ Իլիյն ուրախություն հայտնեց Հայաստան այցի առիթով՝ նշելով, որ շատ է ցանկացել գալ Հայաստան եւ հա-



Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց, որ նման այցերը նպաստում են դարավոր բարեկամական սերտ ու գործակցային կապերի առավել զորացմանը։ Վեհափառ Հայրապետը գնահատանքով հաստատեց նաեւ, որ ՌԴ իշխանությունների կողմից հայկական մեծագույն սփյուռքի նկատմամբ ցու-

ղորդակից դառնալ նրա հոգեւոր արժեքներին ու ժառանգությանը, որոնց միջոցով կենդանի է մնում քրիստոնեական հավատը։ Հայր սուրբը խոսեց նաեւ հոգեւոր կյանքի կարելության եւ ներկա ժամանակներում քրիստոնեության հանդեպ առկա հարձակումների մասին։

Իսկ Օրլովի նահանգապետը մասնավորապես անդրադարձավ հայ համայնքի հետ ձեւավորված սերտ կապերին եւ համագործակցությանը։

Վերջում Նորին Սրբությունն աղոթքով ու օրհնությամբ մաղթեց, որ բարեկամ երկու ժո-

ղովուրդների եղբայրական կապերը մշտապես գորանան, իսկ նրանց միջեւ առկա փոխգործակցությունը պսակվի նոր ձեռքբերումներով։

Հանդիպմանը ներկա էր ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանը։

30 մայիսի

ՌԱԿ-ի կենտրոնական վարչության անդամներին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) կենտրոնական վարչության նորընտիր անդամներին՝ գլխավորությամբ վարչության ատենապետ Սերխիո Նահապետյանի։

Հայցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը՝ տիար Ս. Նահապետյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց նորակազմ վարչության անդամներին։ Իր խոսքում ՌԱԿ-ի նախագահը կարելորեց ազգային կյանքում Հայոց Եկեղեցու բացառիկ դերակատարությունը՝ կուսակիցների անունից պատրաստակամություն հայտնելով գորավիզ լինելու Հայ Եկեղեցուն եւ նրա առաքելությանը։

Այնուհետեւ կուսակցության նորակազմ կենտրոնական վարչության իր օրհնությունը փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետը։ Նորին Սրբությունն ընտրության առիթով իր շնորհավորանքները բերեց վարչության նա-

խագահին եւ անդամներին՝ մաղթելով պտղաբեր եւ արդյունաշատ գործունեություն ազգային անդաստանում։

Հայոց Հայրապետը գոհունակությամբ հաստատեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը մշտապես զգացել է ՌԱԿ-ի բերած գորակցությունը եւ պատգամեց, որ ՌԱԿ-ը հաղթահարի ներկուսակցական բաժանումը եւ համախումբ ու միաբան արդյունավորի իր ծառայությունը հայրենիքում եւ Սփյուռքում։

Չրույցի ընթացքում անդրադարձ եղավ նաեւ Հայ Եկեղեցու քարոզչական, սոցիալական ու կրթական ծրագրերին, հոգեւորականների պատրաստության խնդրին։

Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ նաեւ նրանց նվիրյալ ու նախանձախնդիր ջանքերի շնորհիվ պետք է դիմագրավվեն հայրենիքի ու աշխարհասփյուռ հայ ժողովրդի առջեւ ծառացած բազում մարտահրավերներ։

ՀԲԸՄ-ի նախագահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում աշխատանքային այցով գտնվող ՀԲԸՄ-ի նախագահ տիար Պերճ Սեդրակյանին։

ՀԲԸՄ-ի նախագահը Նորին Սրբությանը ներկայացրեց օրեր առաջ Մոսկվա կատարած այցի արդյունքները եւ ազգային ու եկեղեցական կառույցներում հանդիպումների իր տպավորությունները՝ տեղեկացնելով նաեւ ՌԴ-ում ՀԲԸՄ-ի մասնաճյուղ հաստատելու ծրագրի վերաբերյալ։

Չրույցի ընթացքում մասնավոր անդրադարձ կատարվեց Ադրբեջանի կողմից ապրիլին ԼՂՀ սահմանի ողջ երկայնքով սանձազերծված ռազմական գործողություններին եւ դրանց ադետալի հետեւանքներին։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ-ի նախագահը մեծապես կարելորեցին Հայաստանում եւ Սփյուռքում ի գորակցություն Արցախի ու արցախահայության կազմակերպված հանգանակություններ-

րը, ցուցաբերված օգնությունը եւ հաստատեցին այս ուղղությամբ աշխատանքները շարունակելու անհրաժեշտությունը։

Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ՀԲԸՄ-ի նախագահին եւ անդամներին՝ Արցախում իրականացվող բազմաբնույթ ծրագրերի եւ դժվարին այս շրջանում դրսևորած գորակցության համար։

Հանդիպմանը քննարկվեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ՀԲԸՄ-ի կրթական, սոցիալական եւ եկեղեցաշինական համատեղ ծրագրերը, խոսվեց նաեւ Միջին Արեւելքի հայկական համայնքներում տիրող իրավիճակի, մասնավորաբար՝ սիրիահայության կացության մասին։

Բոլոր հանդիպումներին ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը։

ԿԱՐԳԱԼՈՒՅԾ ԵՆ ՀՌԶԱԿԵԼ

Գառնիկ արեղա Մխիթարյանը եւ Խաղ Բահանա Ղազարյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գառնիկ Բ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Գառնիկ արեղա Մխիթարյանը կարգալույծ է հռչակվել՝ իր դիմումի համաձայն։

Խաղ Բահանա Ղազարյանի կարգալուծության համար հիմք են հանդիսացել նրա կողմից ծառայության վայրն ինքնակամ լքելու փաստը եւ կանոնավոր ծառայության վերադառնալու ցանկության բացակայությունը։

Կարգալույծ եկեղեցականներն այսուհետ դասվում են աշխարհականների շարքը եւ կոչվում իրենց ավագանի անունով՝ Մարտին Մխիթարյան եւ Վիգեն Ղազարյան։

Լրատվական կյութերը՝ ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Մայիսի 24-ին, Նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Փարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ մեծարման ցերեկույթ՝ նվիրված ճեմարանի դասախոսներ Եղիշե ավգ քին. Սարգսյանին, Պարգեւ Շահբազյանին ու Բ. Գ. Դ., պրոֆեսոր Պետրոս Բեդիրյանին։ Բացման խոսքով հանդես եկավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը։

«Մեծապես ուրախ ենք Սրբոց Գայանյանց տոնի այս բերկրալի օրն ամենքիդ ողջունելու Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հարկում։ 140 եւ ավելի տարիների պատմություն ունեցող հոգեւոր այս դարձնող իր գոյության ողջ ընթացքում ունեցել է մեծաթիվ դասախոսներ, ովքեր իրենց ներդրումն են ունեցել հայոց հոգեւոր դասի, ինչպես նաեւ հայրենի մեր կյանքում արժանաւիշատակ հաջողությունների հասած մտավորականների կերտման գործում։ Այդուհանդերձ՝ պետք է նշել, որ անցյալ տասնամյակների ընթացքում եղել են անհատներ, ովքեր ոչ միայն իրենց դասախոսական հմտություններով ու գիտելիքներով են առանձնացել, այլեւ իրենց բացառիկ կարողությամբ՝ ներշնչելու, ոգեւորելու, ճեմարանցիների սրտում այրելու սերը՝ իրենց հոգու ծննդավայր Հայոց Եկեղեցու հանդէպ։ Այս դասախոսների համար Եկեղեցու ծառայությունը նույնականանում էր հայրենի ժողովրդին քրիստոսավանդ պատգամին ընդառաջ ծառայելու առաքելության հետ»,- նշեց հայր Գարեգինը։

Այնուհետեւ ցուցադրվեց «Շողակաթ» հեռուստաընկերության՝ մեծարյալների նվիրված ֆիլմը։

Հայ Եկեղեցու հոգեւոր կրթական հաստատություններում մեծ ավանդ ունեցող մանկավարժների վաստակի մասին խոսք ասացին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրէն Նաթան արք. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի արհիմի եւ թանգարանների տնօրէն Ասողիկ քին. Կարապետյանը եւ կաթողիկոսական գրասենյակի քարտուղար Ադամ քին. Մակարյանը։

Ցերեկույթի ընթացքում կոմիտասյան երգերով հանդես եկավ «Լույս» հնգյակը՝ ղեկավար եւ մեներգչուհի Հասմիկ Բաղդասարյան-Դուլիսանյանի գլխավորությամբ։

Գեւորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ մեծարման ցերեկույթ



Օրվան համահունչ ասմունքեց ճեմարանական սաներից մեկը, իսկ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Հարություն Թովիկյանի, կատարեց կոմիտասյան երգեր։

Ապա իրենց սրտի խոսքն ասացին Եղիշե ավգ քին. Սարգսյանը, տիարք Պարգեւ Շահբազյանն ու Պետրոս Բեդիրյանը։

Շնորհակալություն հայտնելով մեծարման հանդիսության համար՝ նրանք անդրադարձ կատարեցին իրենց կյանքի պատմությանը, հայագիտության հանդէպ ունեցած սիրուն, ինչպես նաեւ՝ կրթական ոլորտում սպասավորությանը։ Բազմավաստակ մանկավարժների խոսքը վերածվեց ուսանելի ու յուրօրինակ դասախոսության, որի ընթացքում առաքինազարդ մտավորականները ներկայացրեցին իրենց մտորումները հավատքի, հոգեւոր արժեքների ու հայեցի դաստիարակության մասին, հայրենիքին եւ Եկեղեցուն ծառայելու, աշխատանքի մեջ նվիրումի, պատասխանատվության եւ նախանձախնդրության վերաբերյալ։

Հանդիսությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ հայրապետական պատգամով։

Իր գնահատանքը բերելով ճեմարանի տեսչությանը՝ կազմակերպված հանդիսության համար, Նորին Սրբությունն ընդգծեց, որ հիշողություններով հարուստ եւ ուսանելի օր է բոլոր ներկաների համար, օր է գնահատելու եւ մեծարելու նրանց, ովքեր տասնյակ տարիներ նպաստել են Հայ Եկեղեցու առաքելության արդյունավորմանը, ովքեր հոգեւորականների մի քանի սերունդ են ձեւավորել, դաստիարակել ու կրթել։

Հայոց Հայրապետն աղոթքով հիշեց հոգեւոր հաստատությունում իր ուսումնառության տարիների բոլոր դասախոսներին եւ մասնավորապես տիար Պ. Շահբազյանին։ Նրանք իրենց անձնական օրինակով խնայողաբար ու ոգեշնչել են իրեն եւ կարեւոր ներդրում ունեցել իր կյանքում։

Վեհափառ Հայրապետը նաեւ խոսեց հետագա տարիներին եւ իր հայրապետության շրջանում մեծարյալների հետ Մայր Աթոռում, Գեւորգյան ճեմարանում եւ Սեւանի Վազգէնյան դպրակոցում ունեցած գործակցության մասին։

«Մենք՝ որպէս ճեմարանի սան, մեր շնորհակալությունն ենք հայտնում պրն Պ. Շահբազյանին, նաեւ տեր Եղիշեին ու պրն Պ. Բեդիրյանին, որ գործակից են եղել եւ իրենց բարի օրինակով, որպէս ավագ սերնդի ներկայացուցիչներ, ոգեշնչել են մեզ եւ ուղենշել մեր կյանքի ընթացքը։

Որպէս Հայրապետ՝ շնորհակալ ենք նաեւ այն հունդերի համար, որոնք ցանել են նրանք, հունդեր, որոնք ավետարանական խոսքի համաձայն՝ այսօր առատ բերք են տվել... Այդ բարիքներն ենք այսօր քաղում, նրանց վրա հաստատում եւ կառուցում մեր տեսիլքների կառույցը, պայծառությունը Մայր Աթոռի»,- ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Նորին Սրբությունը նշեց, որ Հայ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, իրենց կոչման եւ հոգեւոր-կրթական հաստատությունների նկատմամբ մեծարյալների նվիրումն ու սերը բարի պտուղներ են տվել։

Նա հաստատեց, որ նրանք ապրում են իրենց կրթած-դաստիարակած յուրաքանչյուր սանի մեջ, որ այսօր հաջողությամբ իր ծառայությունն է բերում Հայ Եկեղեցուն, իրականացնում իր հոգում դասախոսների ջանքերով ամբարված ազգային-հոգեւոր կյանքի տեսիլքն ու իղծը։

Վերջում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր աղոթքն ու բարեմաղթանքները բերեց մեծարյալներին՝ պատգամելով շարունակել իրենց ներկայությամբ ու գործունեությամբ, բարի օրինակով ու նվիրյալ կյանքով ներշնչել կրթական հաստատության սաներին, դասախոսներին եւ հոգեւոր դասին։



Սկիզբը թիվ 9

1890 թ. սեպտեմբերին Կուկուկյանի խումբը պատրաստ էր արշավանքի. Դաշնակցության Կարսի կենտրոնը դարձյալ առաջարկում է հետաձգել այն՝ նկատելով ցարական իշխանության առանձնահատուկ հետաքրքրությունն ու ձեռնարկումները։ Իր արշավախմբով սահմանագլխին գտնվող Սարգիսը հայտնվում է բարդ իրավիճակում. «Կենտրոնը» հրահանգում է Երկիր չանցնել, իսկ ազատամարտիկները պահանջում էին վճռական քայլերի դիմել եւ արագացնել արշավանքը։ Մերժելով ՀՀԳ առաջարկներն ու հիմնավորումները՝ խմբապետը որոշում է անցնել սահմանը։ 1890 թ. սեպտեմբերի 22-ին մոտ 110 հոգուց (20 ձիավոր) բաղկացած խումբը հավաքվում է Շահտեան գյուղում, որ այնտեղից լեռներով անցնի թուրքական սահմանը։

ԼՈՒՅՍԻ ՃԱՆԱՊԱՐԿՈՎ...

նը։ Երբ հասնում են սահմանագլխին, Սարգիս Կուկուկյանը դիմում է իր մարտընկերներին. «Մենք շուտով կը մտնենք Թուրքաց Հայաստան, լաւ մտածեցէք, այնտեղէն վերադարձ չկայ։ Մենք կ'երթանք մեռնելու, որպէսզի ճանապարհի հարթէնք գալիք կռուող շարքերուն համար։ Թո՛ղ ոչ ոք ձեզմէ յոյս ունենայ, թէ կարող է ողջ մնալ։ Ով որ ատկէ կը վհատի, թող այժմէն վերադառնայ...» («Յեղափոխական աւպով», էջ 39)։ Խմբի՝ սահմանն անցնելու մասին արդէն տեղյակ էին թուրքական կայազորի հրամանատարությունը եւ ռուս սահմանապահները։ Հայ ազատամարտիկները գինված ընդհարումներ են ունենում քրդական ջոկատների եւ թուրք հեծյալների հետ։ Ապա Խառ գյուղում, որտեղ հայ մարտիկները կանգ էին առել հանգստանալու, կոզակները շրջապատում են նրանց։ Ռուս զինվորներին հաջողվում է խումբը մի ողջ օր պաշտել շրջափակման մեջ. հայ մարտիկների դրությունը դառնում է օրհասական։ Կոզակները խուզարկություններ եւ ձեռքբերություններ են սկսում։ Ստեփան Ստեփանյանի վկայությամբ՝ «Հարեան քիւրտ գիւղացիները պակաս չէին մնար, որսորդական խումբի հետ բաժնուած՝ այս ու այն կողմ կ'առաջնորդէին զինուորները եւ շներու պէս կ'որսային մեր ընկերները» (անդ, էջ 44)։

Սարգիս Կուկուկյանը մարտիկներին առաջարկում է առանց դիմադրություն ցույց տալու, իբրեւ ռուսահպատակներ, հանձնվել. խմբապետը համոզված էր, որ ստեղծված իրավիճակում դա է միակ տեղը, ցարական իշխանությունն իրենց խիստ չի պատժի, չէ՛ որ իրենք պայքարում են ոչ թէ

Ռուսաստանի, այլ Թուրքիայի դէմ։ Չանսալով Կուկուկյանի հորդորներին՝ ոմանք, այնուամենայնիվ, դիմադրություն են ցույց տալիս եւ զոհվում, ոմանք՝ դիմում փախուստի, իսկ մյուսներին (այդ թվում եւ Սարգիսին) ձերբակալելով՝ նետում են Կաղզվանի բաւտը։ Այս մասին Ստ. Ստեփանյանը դառնությամբ եւ սրտի մորմոքով պետք է հիշեր. «Ապա իրէշային տանջանքների ենթարկելով՝ մեզ տարին Կաղզուան։ Հսկող սահմանապահ զինուորները նստած էին լաւ ձիերի վրայ եւ անխնայ բռնում էին։ Հէնց որ մէկն ու մէկը մեզանից քայլերը դառնալէնքում էր, հայիոյում ու մտրակներով ծեծում էին։ Աննկարագրելի չարչարանքներով հասանք Կաղզուան, ուր մեզ պահեցին 25 օր...» (Տերունի, Կուկուկեան խմբի արշաւանքը. «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հտ. Ա, էջ 24)։

Այսպիսով՝ Սարգիս Կուկուկյանի գլխավորած արշավանքը ձախողվում է. հայ ազատամարտիկները չեն կարողանում իրագործել իրենց հայրենասիրական նպատակներն ու ձգտումները։ «Կուկուկեան ձեռնարկը, սակայն, չարդարացրեց իր վրայ դրուած հոյսերը։ Թէ՛ հրամանատարութիւնը, թէ՛ խմբի անդամները անփորձ ու անվարժ երիտասարդներ էին եւ ոգեւորութիւնից ու զոհաբերութեան պատրաստակամութիւնից զատ ոչինչ չուէին» («Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան», էջ 276)։ Ցարական կառավարությունը դաժանորեն պատժեց դէպի Երկիր ուղղված առաջին արշավանքի մասնակիցներին։

1890 թ. սեպտեմբերի 25-27-ը արդեն ձերբակալվել էին Սարգիս Կուկուկյանի խմբի 43 անդամներ։ Դատավարությունն սկսվում

է միայն երեք տարի անց՝ 1893 թ. ապրիլի 7-ին Կարսում («Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», էջ 25), ուր տեղափոխվել էր Երեւանի նահանգային դատական առյան իր ողջ կազմով։ Խմբի գործունեությունը բնութագրվում է իբրեւ քրեական՝ ազգային վրեժխնդրությունից դրոճված զինված դիմադրություն իշխանությունների դէմ։ Հայ ազատամարտիկների արդարացի պահանջներն անտեսվում են, բոլոր փաստերը խեղաթյուրվում («Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», էջ 25)։ Ամբաստանյալները պահանջում են, որ դատավարության ընթացքում ներկայացվեն իրենց գործողությունների իրական, քաղաքական նպատակը եւ հայրենասիրական ձգտումները։ Սակայն ցարական դատարանը գործը քննում է բացարձակ այլ տեսանկյունից. խմբի անդամներին ծանր մեղադրանքներ են ներկայացնում եւ փորձում են «հիմնավորել», թէ նրանց գործողություններն ուղղված են եղել նաեւ ցարական Ռուսաստանի դէմ (Գաբրիէլ Լազեան, Յեղափոխական դէմքեր, էջ 289)։ Դատավարությունը տեսում է գրեթէ մեկ ամիս եւ ավարտվում դատարանի՝ 1893 թ. մայիսի 7-ին կայացրած վճռով. արշավախմբի անդամները մեղադրվում են որպէս չարագործներ, մարդասպաններ եւ պետական իշխանության թշնամիներ։ Դատարանի որոշումը դաժան եւ անարդար էր. այն ազգային-ազատագրական պայքարն արմատախիլ անելու նպատակ ուներ։ Խմբապետ Կուկուկյանին դատապարտում են 20 տարվա ազատազրկման, որից 7 տարին շղթայակապ, ապա՝ մշտական աքսոր։ Ծանր էին նաեւ արշավախմբի մյուս անդամների պատիժները։ Չնայած մարտիկները ամեն կերպ փորձում են բողոքարկել կայացված վճիռը, սակայն Երեւանի նահանգային դատարանի որոշումը թողնվում է անփոփոխ։

Մայիսի 25-ին, Նախագահության Լ. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Հայաստանի եւ Արցախի թեմերում սպասավորող քահանաների տարեկան հավաքը: Ժողովին մասնակցում էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի 45 միաբան եւ 184 քահանա: Եկեղեցականաց դասը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, Նախ Մայր տաճարում մասնակցեց Գիշերային ժամերգությանը, ապա Գեորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում ժողովն սկսեց իր աշխատանքը: Տերունական աղոթքից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթեց վերջին տարում ի Տեր հանգչած հոգեւորականների, ինչպես նաեւ հայրենյաց պաշտպանության ընթացքում զոհված քաջարի հայ զինվորների հոգիների հանգստության համար:

Այնուհետեւ բացման խոսք ասաց կազմակերպիչ հանձնախմբի նախագահ, Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը: Հայոց Հովվապետի անունից ողջունելով եկեղեցականներին՝ Միքայել սրբազանն անդրադարձավ ժողովի օրակարգին՝ վստահություն հայտնելով, որ հոգեւոր դասի պատկառելի կազմը երաշխիքն է նորանոր նվաճումների եւ ձեռքբերումների՝ հանուն Աստծո փառքի, հայրենիքի շինության եւ Հայ Եկեղեցու զորացման: Հոգեւորականների անունից սրբազան հայրը մաղթեց, որ Տերն անսասան պահի Արարատյան աշխարհը՝ իր նահատակ կույսերի բարեխոսությամբ, սբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, եւ պայծառ մնա Մայր Աթոռն իր գահակալով ու եպիսկոպոսաց դասով, իր միաբանությամբ ու հոգեւորականներով: Հավաքի քննարկման կույթ էին ընտրվել հովվական, ծիսական կյանքին, ինչպես նաեւ քարոզչական, կրթադաստիարակչական գործունեությանն առնչվող մի շարք խնդիրներ: Ծիսական հարցերի շուրջ զեկույցներով հանդես եկան Չոհրապ քհն. Մանասյանը (Կոտայքի



թեմ) եւ Նշան քհն. Պանֆյորովը (Շիրակի թեմ): Ծխական քահանաների կրթադաստիարակչական գործունեության վերաբերյալ զեկույցեց Ծավարշ քհն. Սիմոնյանը (Տավուշի թեմ): Քննարկումներից հետո քահանայից ժողովը հանդես եկավ նաեւ հայտարարությամբ. «Մենք՝ Հայաստանի եւ Արցախի թեմերի քահանաներս, գոհություն եւ փառք ենք հայտնում Աստծուն, որ համախմբվել ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Լ. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր Նախագահությամբ եւ մեր թեմակալ առաջնորդների ղեկավարությամբ՝ անդրադարձ կատարելու հովվական կյանքին եւ առաքելությանը: Արարատյան տոների եւ մայիսյան հաղթանակների ոգեշնչող մթնոլորտում մեկ անգամ ես վերահաստատում ենք մեր ուխտը հանդես մեր առաքելահաստատ Սուրբ Եկեղեցին եւ Մայր Հայրենիքը: Մեր գորակցությունն ու սերն ենք հղում հայրենյաց սահմանները պաշտպանող մեր քաջարի մարտիկներին ու խիզախ հրամանատարներին եւ նաեւ իրենց ընտանիքներին սիրատուն անդամներին՝ աղոթելով մայուն խաղաղության եւ Հայոց աշխարհի անսասանության համար: Մտահոգ Մերձավոր Արեւելքի պայթյունալի իրավիճակից՝ հույս ենք հայտնում, որ միջազգային հանրությունը կգտնի ուղիներ խաղաղ եւ արդար հանգուցալուծման համար՝ ապահովելով նաեւ մեր հայրենակիցների անվտանգ կյանքը: Աղոթում ենք դարաբաղյան հակամարտության ընթացքում եւ, մասնավորապես, ապրիլին Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների հետեւանքով Նահատակված հայորդիների հոգիների հանգստության համար եւ Սուրբ Հոգու գորակցությունն ենք հայցում նրանց սգակիր մայրերին եւ ընտանյաց բոլոր անդամներին: Շուտափույթ ապաքինում ենք մաղթում վիրավորներին: Վստահ ենք, որ մայիսյան հաղթանակների ոգին պիտի անևահանջ մնա հայոց կյանքում՝ թե՛ խաղաղ ստեղծագործ աշխատանքի մեջ եւ թե՛ հայրենյաց սահմանների պաշտպանության սրբազան գործում:

Չորացած ս. Հովհիսիմյանց եւ ս. Գայանյանց բարեխոսությամբ, մեր հայացքը հառած հոր վիրապից ճառագող լույսին եւ հաստատված քրիստոսափն Մայր Աթոռի հավիտենական առաքելության վրա՝ Հայրունակելու ենք մեր անսակարկ ծառայությունը մեր հավատավոր ժողովրդին եւ վերանորոգված տեսիլքով ու թարմ ավյունով վերադառնալու ենք Տիրոջ կողմից մեզ վստահված այգիների մշակությանը: Ժողովն ամփոփեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Նորին Սրբությունը Նախ իր ուրախությունն արտահայտեց հավաքի առիթով՝ գնահատանք հայտնելով Միքայել սրբազանին ու կազմակերպիչ հանձնախմբին: Վեհափառ Հայրապետը գովելի նկատեց հավաքի ընթացքում Հայ Եկեղեցուն ու եկեղեցականներին հուզող հարցերի ու խնդիրների արծարծումը, ինչն առիթ է ընծեռում անդրադարձ կատարելու եւ ուղիներ գտնելու հոգեւոր ծառայության առավել արդյունավետ կազմակերպման համար: Հայոց Հովվապետը քահանայից դասին պատգամեց շարունակել Նախանձախնդիր եւ նվիրյալ ծառայություն քերել ժողովրդին եւ ա-

մենայն ջանք ի գործ դնել՝ մշտապես բարձր պահելու Հայ Եկեղեցու հեղինակությունը: Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ անդրադարձ կատարեց արցախյան վերջին իրադարձությունների ժամանակ Մայր Աթոռի միաբանության, Հայաստանի եւ Սփյուռքի թեմերի եւ թեմական կառույցների գործունեությանը: «Գնահատանքի են արժանի այն ոգին ու Նախանձախնդրությունը, որ դրսևորվեցին մեր թեմակալ առաջնորդների եւ եկեղեցական սպասավորների կողմից: Նրանք ջանացին կարելի անել, որպեսզի հնարավոր աջակցություն հասցվի հայրենյաց պաշտպան մեր զինվորներին, նրանց ընտանիքներին ու վիրավոր անձանց: Եվ այսօր էլ շարունակում են գտնվել դիրքերում՝ հայրենիքի սահմանները պահպանող մեր զինվորների կողքին, եւ իրենց խոսքով ու գործով գորակցում քաջարի զինվորներին: Պիտի շարունակվեն հետևողական աշխատանքներ իրականացվել, որպեսզի մեր բանակը լինի զորեղ, եւ կարելի աջակցություն մատուցվի եկեղեցականների ու մեր զավակների կողմից՝ ի նպաստ հայկական բանակի», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ տեղեկացնելով նաեւ զոհված եւ վիրավոր զինվորների ընտանիքներին Մայր Աթոռի սոցիալական ծառայության ցուցաբերած աջակցության մասին: Հայրենիքի խաղաղության համար առ Աստված աղոթք բարձրացնելով՝ Նորին Սրբությունը քահանայից դասին մաղթեց մայիսյան հաղթանակների խորհրդով բարձրացնել ազգային գիտակցությունն ու հայրենասիրական ոգին՝ ընդգծելով, որ բացառապես այդ ոգով է հնարավոր դիմագրավել հայրենիքի առջեւ ծառացած բոլոր մարտահրավերները: Վերջում հոգեւոր դասը մասնակցեց Երեկոյան ժամերգությանը:

Թոնդրակյան շարժումը եւ նրա դարազուլուխներին դասադասող գեղարվեստական համադասկերը Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» ողեմում

Սկիզբը՝ թիվ 5-9
Եթե նույնիսկ Գր. Մագիստրոսից, Ա. Լաստիվերցուց, Գր. Նարեկացուց բերված քաղվածքներում թոնդրակեցիներին ու նրանց շարժմանը տրված բնութագրումները մասամբ ճիշտ կամ թեկուզ դավանաբանական հակառակորդի թույլ տված միտումնավոր ծայրահեղություն համարենք, ապա տարբեր երկրներում ճամփորդած, պավիկյանների կենտրոնում աղանդավորական ուսմունքները յուրացրած, «չար մոլութեան» այդ տխրահռչակ ասպետ Սմբատ Չարեհավանցին իրոք եղել է ժամանակի հայ հասարակական կյանքը խառնշտորող դիվային ուժ, որին մեծարել, «փիլիսոփայական հայացքներն» ուսումնասիրել ու որպես առաջադեմ գործչի՝ կերպավորել են հետագա եւ խորհրդային ժամանակներում: Բայց հետաքրքիրն այն է, որ ոչինչ չի ասվում նրանց հակահայ ու հակապետական գործունեության մասին, մինչդեռ մզկիթ քանդելու եւ այրելու, մուլլա պապներու համար արաբական էմիր Աբդլ Բարդի կողմից պատժված Չարեհավանցու մասին, այն էլ ենթադրաբար, ակնարկում են, թե «նրա պայքարն ուղղված է եղել նաեւ օտար նվաճողների դեմ» (ՀՄՀ, հ. 10, 454): Իսկ այդ «նաեւ»-ից առաջ՝ ում դեմ էր ուղղված. դարձյալ «ներքին» հարստահարողների դեմ, այսինքն՝ միայն իրենց Նախասիրած, իրենց համար ընդունելի դասակարգային պայքարի շրջանակներում, իսկ հայոց պետականու-

թյան, Հայ Եկեղեցու եւ հայ ընտանիքի, հայ մարդու բարոյական ու ազգային նկարագրի դեմ ոտնձգությունների մասին փիլիսոփայական լռությունն է միակ պատասխանը: Այլ է նույն խնդիրներին գրողի՝ մոտեցումը: Նա պատմության ստրուկը չէ, ասում էր Բեկինսկին, կավելացնելիք՝ նաեւ ժամանակի ստրուկը չէ: Մեծ հանցանք չէ Սմբատ Չարեհավանցուն կամ Պետրոս Գետադարձին մի երկու տասնամյակ ետ կամ առաջ տեղափոխելը կամ վերջինիս փոխարեն՝ նրա դերը կատարող Հուսիկ Աղավունի անունով մեկին կերպավորելը, մանավանդ եթե այդպիսով գործղանում է միջնադարը պատկերող գեղարվեստական երկի պատմականությունը: Այո՛, գրողը պատմությունից ընտրում է այն հերոսին, որի գործը եւ անձնավորությունը առավել բնորոշ են պատմական այս կամ այն երեւոյթը լիարժեք ներկայացնելու համար: Կարելու է նաեւ, որ հեղինակային ասելիքն ավելի ցայտուն է դրսևորվում այն հերոսի միջոցով, որի տվյալ ժամանակում ու միջավայրում գործելը չի հակասում կամ խանգարում բնականությանն ու գեղարվեստականությանը եւ ձեռք է բերում պատմական հավաստիության արժեք: Պոեմի գործողություններից երեւում է, որ Հուսիկ Աղավունին նույն Պետրոս Գետադարձն է, սակայն Հովհ. Շիրազը կամ «Անի» պոեմից հետո չի կամեցել անդրադառնալ այդ անունին, կամ չի ուզել նրան վերագրել այն դրական հատկանիշները, որ կաթողի-

կոսն ի հայտ է բերել թոնդրակեցիներին բանադրելիս եւ հայոց հավատքն ու Եկեղեցու իրավունքները պաշտպանելիս: Այսպես մտածելու հիմք տալիս են պոմում ակնարկված այն գործողությունները, որ կատարվել են հենց Պետրոս Գետադարձի եւ Գր. Մագիստրոսի ժամանակ, բայց հեղինակը դրանք վերագրել է ոմն Հուսիկ Աղավունու: Իսկ պատմությունից հայտնի է, որ Պետրոս Գետադարձն էր հետեւողականորեն պահանջում, որ կատարվի Օհան - Սմբատ արքայի կտակը, եւ Անին հանձնվի Բյուզանդիային: Դատավարություն-բանադրության թունդ վեճի ժամանակ արքայի, կաթողիկոսի, Մագիստրոսի, իշխանների եւ ծուկի չեկող թոնդրակեցիների կողմից հնչում են փոխադարձ կշտամբանքներ. - Կախել,- կայծակեց Մագիստրոսը: - Ըե՛հ կախիր,- շանթեց Մագիստրոսին Մեծ աղանդապետ տուսերախոսը.- - Լռի՛ր, հարեմխան, ինչպես քո ձեռք, Շղթայի մեջ էլ հանդուգն է նեռը... - Նեռը քո վաղն է, երբ Անին ծախես... (Մարգարեացավ մեծ թոնդրակեցին). - Մի՛թե, տե՛ր արքա, չպիտի կախես,- Իշխաններն իսկույն խուլ տրտնջացին: (Թ., էջ 119):

(Այսուհետեւ՝ **Շիրազ Հովհ.**, Թոնդրակեցիները, պոեմ՝ պատմափիլիսոփայական, վի-



պերգ՝ ազգային-համամարդկային, «Հայրապետ» հրատ., Եր. 2014: Սույն հրատարակությունից քաղվածքների էջերը այսուհետեւ կնշվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ: Թ-ն «Թոնդրակեցիները» վերնագրի համառոտումն է - Ս. Մ.): Թոնդրակյան գաղափարախոսության կրողները, շարժման մասնակիցները՝ որպես միեւնույն աղանդի հետեւորդներ, գործել են միասնաբար, ղեկավարվել միեւնույն կենտրոնից, թեւեւ ունեցել են իրենց բնավորության անհատականությունը, տարակարծություններ ու հակասություններ: Եվ անհիմն չէ Սմբատ Չարեհավանցու ու թոնդրակյան շարժման ծագման մասին համոզումը շիրազյան ձեւակերպմամբ՝ «Բյուզանդի բան է»:

Շարունակությունը՝ էջ 8



Սկիզբը՝ էջ 6

1895 թ. որոշ դատապարտյալներ՝ իբրեւ տկարակազմ, քսորվում են Սիբիր, իսկ մնացյալները Սարգիս Կուկունյանի հետ միասին՝ Սախալին կղզի:

Սախալինյան քսորի դաժան տարիների մասին խմբագրող պատմում է իր «Վերջին օրերս Սախալինում» փոքրածավալ գրքուկում, որը լույս է տեսնում 1910 թ. Բաքվում: Աքսորի պայմաններում անգամ Սարգիս Կուկունյանը փորձում է օգտագործել իր գիտելիքները՝ Սախալինի ճապոնացիներին եւ քսորյալների երե-

ԼՈՒՅՍԻ ՃԱՆԱԴԱՐԿՈՎ...

խաներին ռուսերեն սովորեցնելով: Որոշ ժամանակ անց կղզու գետերալ-նահանգապետ Լյապունովը նրան նշանակում է կառավարական տպարանի կառավարիչ: Սարգիս Կուկունյանը տպարանական գործին ծանոթ էր դեռեւս Պետերբուրգում ուսանելու տարիներից եւ բարեխիղճ աշխատանքով շատ կարճ ժամանակահատվածում կարողանում է լուծել իր առջեւ դրված բոլոր խնդիրները: Այստեղ նաեւ ճապոններեն է սովորում:

1904 թ. բռնկվում է ռուս-ճապոնական պատերազմը, եւ Ս. Կուկունյանը, որպես կամավոր, զորագրվում է ռուսական բանակին (Ս. Կուկունյան, Վերջին օրերս Սախալինում, Բաքու, 1910, էջ): Երբ ճապոնացիները գրավում են Սախալինը, հայ մարտիկը հետաքրքիր դիպվածով փրկվում է դատաստանից. պատահաբար նրան ճանաչում է մի ճապոնացի սպա, ուրիշ Կուկունյանը ռուսերեն էր սովորեցրել: Սպան հայտնում է, որ Կուկունյանը քսորյալ է եւ այդտեղ է գտնվում միայն այն պատճառով, որ համարձակվել է պայքարել իր ազգի ազատության համար:

Ս. Կուկունյանը Սախալինում մնում է մինչեւ 1906 թ. հունիսը. Ռուսական կառավարությունը ներում է շնորհում 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմին մասնակցած քսորյալներին: 1906 թ. հոկտեմբերի 30-ին Կուկունյանը վերա-

դառնում է հայրենի Նիժ գյուղ (Գաբրիել Լազեան, Յեղափոխական դեմքեր, էջ 289): Սակայն այստեղ նրան հանգիստ չեն տալիս չարչարանքից ու սովից տկարացած գյուղացիների աղերսանքները:

Սարգիսը պայքար է սկսում ներքին հարստահարիչների դեմ՝ փորձելով հայ շինականի տեր դարձնել իր արդար վաստակին: Նրա արդարացի պահանջները, գործունեությունը չէին կարող աննկատ մնալ: Մեծահարուստներն ու հողատերերը ձգտում էին խեղդամահ անել գյուղացիական բողոքի եւ ընդդիմության ցանկացած դրսևորում, ամեն զեղով ազատվել Ս. Կուկունյանից:

1910 թ. հոկտեմբերի 15-ին Նիժում տեղական տանուտերի ցուցմունքով ձերբակալվում է 8 հոգի. վերջիններիս մոտ նաեւ զենք է հայտնաբերվում: Առանց որեւէ փաստի եւ լուրջ հիմնավորման՝ ցարական իշխանությունը ձերբակալվածներին որակում է «հեղափոխականներ»՝ նրանց գործունեությունը կապելով Ս. Կուկունյանի հետ: Սարգիս Կուկունյանը ձերբակալվում է Բաքվում՝ 1910 թ. հոկտեմբերի 18-ին: Դատավարությունը տեղի է ունենում Գանձակում, եւ ցարական դատարանը նրան դատապարտում է 15 տարվա տաժանակիր աշխատանքի:

1912 թ. փետրվարի 4-ին ՅՅԴ-ն կազմակերպում է Սարգիս Կուկունյանի փախուստը Գանձակի բանտից: Սակայն փախուս-

տից ընդամենը 17 օր անց Նոր Բայազետ գավառի Նորադուզ գյուղում ոստիկանությունը ձերբակալում է Ս. Կուկունյանին եւ նրա երեք ուղեկիցներին: Գանձակից նրան տեղափոխում են Օրյոլ քաղաքի բանտը: Աքսորի ծանր եւ դաժան տարիները քայքայել էին Սարգիս Կուկունյանի առողջությունը. նա մեկ տարի է դիմանում Օրյոլի բանտային պայմաններին եւ 1913 թ. նոյեմբերի 26-ին թոքախտից կնքում իր մահկանացուն: Հետագայում Գ. Խաժակը (Արծիվյան) Ս. Կուկունյան մարտիկի մասին մեծ ցավով գրում է. «Ծանր էր խաչը, դու պիտի մեզի ճամբար բանայիր Անյայտին մեջ, առաջին արահետը: Կեանքը անողորմ եղաւ դեպի քեզ, ինչպես քո սիրած Ազգիդ: Դու եղար անոր մանրանկարը, ո՛վ Մեծ Տառապեալ» (Գաբրիել Լազեան, Յեղափոխական դեմքեր, էջ 291):

Չնայած Սարգիս Կուկունյանի պայքարը ողբերգական ավարտ ունեցավ, սակայն ժողովուրդն արժեւորեց այս շարժումը որպես հաղթանակ, ապրեց ու ոգևորվեց դրանով: Այս արշավանքը հայ ազատամարտի էջերում գրանցվեց լուսե տառերով եւ անջնջելի հետք թողեց՝ հաջորդ սերունդների համար դառնալով ներշնչումի աղբյուր: Ռուբենը (Տեր-Մինասյան) իրավամբ նկատում է. «...այդ խումբի արժեքը պետք չէ որոնել իր մեջը, այլ պետք է որոնել այն ազդեցութեան մեջ, զոր թողած է ժողովրդի հոգեբանութեան վրայ» (Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հտ. Է, Թեհրան, 1982, էջ 114-115):

Արիստես ՉԱՆԹԻՎՅԱՆ

Թոնդրակյան շարժումը եւ նրա դարազուլուխներին դասադարձող գեղարվեստական համադասկերը Նովի. Շիրազի «Թոնդրակեցիները» դոնմում

Սկիզբը՝ էջ 7

Թոնդրակեցիներն ու թոնդրակուհիները գրեթե չեն տարբերվում իրարից. որոշակի նմանություն կամ հավասարություն կա նրանց նպատակադրումների, վարքագծի ու գործելակերպի միջեւ: Թոնդրակուհիներ Ախնի եւ Կամարայի մասին պատմագիրն ասում է, թե սրանք կատարել են ահավոր չարագործություններ, քանդել բազում ընտանիքներ եւ ապականել շատ ազնվասիրտ մարդկանց, Եկեղեցու եւ սուրբ խաչի հանդեպ այնքան բացահայտ է եղել նրանց արհամարհանքն ու ատելությունը, որ այս գեղեցկուհիներն իրենց հետույքներին խա՛չ են դրոշմել: Լաստիվերցին հավաստում է, որ սրանք «...սուների պես սրեցին իրենց չար լեզուները... ինչպես ասված է սաղմոսական երգում, - եւ լարեցին իրենց աղեղները չար գործերի համար եւ նետեր արձակելով՝ ազնվասիրտ մարդկանց վրա՝ կարեւոր ու մահացու վիրավորեցին շատ անմեղ հոգիներ» (Լաստիվերցի Ա., Պատմություն, թրգմ.՝ Վ. Գեորգյանի, «Հայաստան», Եր., 1971. էջ 92, ընդգծ.՝ Ս. Մ.): Այսինքն՝ սրանք գործելակերպով ու գաղափարներով Եականորեն չեն տարբերվում ծերունի ավագակ Սմբատ Չարեհավանցուց, Հարքացուց, Արքայիկից, Վրվեռից, Թորակից, Կունծիկից եւ աղանդի մյուս սողամարդ անդամներից:

Կունծիկ արեղայից ու թոնդրակուհիներին, սակայն, ավելի վտանգավոր ու կատաղի էին շարժման պարագլուխ Սմբատ Չարեհավանցին՝ «բոլոր չարիքների հայրը», Թորակ ու Վրվեռ թոնդրակեցիները, Հակոբոս Հարքացին, որոնք պարզապես սպառնում էին հայոց պետության ու Եկեղեցու գոյատևմանը՝ իրենց քարոզչությամբ հարվածելով հայկականությանը, ազգի գոյաբանական արմատներին՝ հավատքին, պետականությանը, երկրի պաշտպանունակությանը, ընտանիքին ու բարոյական ըմբռնումներին, մշակութային ու լեզվին, առհասարակ հայ մարդու ազգային նկարագրին: Իսկ այս ճիվաղների ազգակործան արարքների մասին ոչ մի խոսք չկա խորհրդահայ պատմագետների ու միջնադարագետ բանասերների աշխատություններում: Ընդհակառակը. նրանք, հենվելով այդ շարժման սոցիալական բովանդակության վրա, որ մասամբ է միայն արդարացի, շարժումն

անվանել են հակաֆեոդալական եւ նրա գաղափարաբանությունն էլ՝ հույժ առաջադիմական:

Եվ այս բոլոր «սատանայի ժիր մշակները», ինչպես ժամանակակիցներն են դիպուկ բնորոշել նրանց, հայոց թագավորի, կաթողիկոսի, սպարապետի եւ հասարակական տարբեր խավեր ներկայացնող հերոսների հետ միասին, բարձր արվեստով կերպավորված են Նովի. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմում:

Որպես բանավիճող կողմեր՝ նրանք հանդես են բերված դրամատիկական բարդ իրավիճակում՝ բանադրությունը դատավարության ընթացքում՝ իրենց «խոսքի ձին ծառս հանելով», մարտնչող երկխոսություններով ու անհատականացված խոսքով:

Բանադրողները թեեւ իրազեկված են, քաջ գիտեն շղթայվածների գործած ոճիրները, բայց բազմության առջեւ թոնդրակեցիների հանցանքներն ապացուցելու համար դիմում են վկաների, ովքեր Անիի Մայր տաճարում, երդվելով բոլոր սրբություններով, հավաստում են նրանց ազգադավ արարքների իսկությունը: Իսկ վկաները բացահայտում են նորանոր հանցանքներ, որ մինչ այդ չէին էլ մատնանշվում: Օրինակ՝ հենց այդ դատավարության ընթացքում է ի հայտ գալիս «Նոր Հիսուս» հորջորջվածի՝ Սմբատ Չարեհավանցու վարքագծին բնորոշ գաղտնիքներից մեկը. ատյան են բերվում այն երեք կույսերը, որոնց հետ սեւ ու կապույտ աչքերով այդ հրեշը մի գիշերում կենակցել է, հղիացրել նրանց՝ աշխարհ է բերել երեք մանուկների՝ ճիշտ իր «քթից ընկած», իր պես տարագույն աչքերով:

Բանադրողները հնչեցնում են մեղադրականն ու խստագույն պատժի գործադրման սպառնալիքով շանում նրանց դարձի բերել, իսկ մեղադրյալները ջանում են արդարանալ եւ խուսափել ահավոր պատժից:

Այս իրավիճակը գեղարվեստական համոզչությամբ ներկայացնելու համար գրողը պարտավոր էր խորանալ երկու



կողմերի հայացքների մեջ, թոնդրակեցիների չափ աստվածամերձ պիտի լինեւր եւ արքայի ու կաթողիկոսի չափ հայ հավատի պաշտպան, ցույց տար գործված չարիքների վտանգավորության աստիճանն ու կիրառվելիք պատժի արդարացիությունը: Բայց ըստ Եուրոյան պատիժ չէր լինելու, եթե թոնդրակեցիների շղթայված պարագլուխները դարձի գային, ծունկի իջնեին ու ներում հայցեին դատապարտող ատյանից:

Երբ պատմագետն է փաստերի լեզվով ու տրամաբանությամբ խոսում թոնդրակեցիների մասին՝ բերելով ժամանակակիցների վկայությունները, ու դրանք համարելով՝ բացահայտում շարժման դրդապատճառներն ու հետեւանքները, նկատում ու վեր հանում օրինաչափությունները, մի բան է, բայց մի այլ բան է, երբ գրողն է նույն վկայություններն ու տեղեկություններն օգտագործելով՝ ստեղծում գործողության մեջ դրված կենդանի բնավորություններ, պատմական միջավայրի, դարաշրջանի ու թոնդրակյան շարժման գեղարվեստական խտացված ու ճշմարտացի պատկեր: Թերեւս այս պատճառով է նաեւ հաշտարարի դեր ստանձնած կաթողիկոսը վերանվանվել Աղավաղի:

Ավանդատ է, որ վեհափառի եւ արքայի հրամանով անգամ չխոնարհվող, ծունկի չիջնող թոնդրակեցիներին տեսնելով՝ արքան, անկախ նրանից արդար է թե ոչ,

կաթողիկոսին է լրջորեն մեղադրում հոգեւոր իշխանության թուլության եւ աղանդավորական շարժումը սաղմնային փուլում չկանխելու եւ ժամանակին նրա դեմ անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելու համար: Նրա լուռ ու խոսուն, շանթող հայացքը, դատապարտող խոսքի հնչերանգը, մարդկային բարդ ապրումները պատկերելը, իհարկե, պատմագետի խնդիր էր, հոգեբանական բարդ ու լարված իրավիճակը նա ցանկության դեպքում էլ չէր կարող գեղարվեստական ուժով ինչպես հարկն է նկարագրել, բայց այլ է ստեղծագործական առանձնահատկություն:

Շարունակելի
Սամվել ՄՈՐԿՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԵՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 2.6.2016 թ.

Տպաքանակ՝ 2100
Գինը՝ 50 դրամ